

Արձանագրություն №2/2015-2016

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2015թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 67-ը (վաթսունյոթ): Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **ՀՀ սահմանադրության փոփոխությունների նախագծի քննարկում** (զեկ. իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյան, սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ Գ.Գ. Դանիելյան):
2. **Ֆակուլտետների կանոնադրությունների հաստատում** (զեկ. իրավաբանական բաժնի վարիչ Ա. Ա. Թադևոսյան):
3. **Հաղորդում 2015-16 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին** (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
4. **Տեղեկատվություն 2014-15 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին** (զեկ. ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):

5. Ընթացիկ հարցեր

5.1. Տեսաա Հռֆմանին ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու մասին:

5.2 ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Նորիկ Այվազյանին, ամբիոնի վարիչի պարտականությունները վայր դնելու կապակցությամբ նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին:

Պրոռեկտոր Գ. Գևորգյանն առաջարկեց օրակարգում ներառել նաև **ԵՊՀ դասախոսների տարբերակված հավելավճարի նոր կարգի մշակման նպատակով գիտական խորհրդի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու հարցը**: Գիտական խորհուրդը հավանություն տվեց Գ. Գևորգյանի առաջարկին: Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** – ՀՀ սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը գիտական խորհրդին հայտնեց, որ ՀՀ սահմանադրության փոփոխությունների նախագծի ներկայացումը և մեկնաբանությունները կրում են իրազեկման բնույթ, որպեսզի ԵՊՀ գիտխորհրդի անդամները հարցի շուրջ իրենց դիրքորոշումներն ավելի հստակ պատկերացնելու հնարավորություն ունենան: Ա. Սիմոնյանը զեկուցման համար ամբիոնի մոտ հրավիրեց սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակման հանձնաժողովի անդամներ, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանին և սահմանադրական

իրավունքի ամբիոնի վարիչ Գ. Բ. Դանիելյանին: Բանախոսներն ի սկզբանե հայտնեցին, որ, կապված սահմանադրության երկու՝ քաղաքական և իրավական բովանդակությունների առկայության հետ, անդրադառնալու են միայն իրավական բովանդակությանը, առաջարկվող փոփոխությունները գնահատելով իրավականության ու սահմանադրականության դիրքերից: Գ. Ղազինյանի մեկնաբանությունները հիմնականում վերաբերում էին մարդու իրավունքների և դատական իշխանության հետ կապված դրույթներին: Նա, մասնավորապես, նշեց, որ գործող սահմանադրության հետ համեմատ առաջարկվող նախագիծն ավելի շատ է կանոնակարգման ենթարկում բազմաբնույթ իրավահարաբերություններ, որի նպատակն է օրենսդրական մակարդակում շեղումների և բացերի հնարավորինս քիչ հնարավորություններ թողնելը: Նախագծի 2-րդ՝ մարդու իրավունքների գլխի առնչությամբ, Գ. Ղազինյանը նկատեց, որ ավելի ընդլայնվում և որոշակիացվում է իրավունքի գերակայության սկզբունքի դրույթը. մարդը դիտարկվում է որպես բարձրագույն արժեք, նախագիծը մարդու իրավունքների և ազատությունների ծավալն այնքան է մեծացնում, որ դրանց սահմանափակման համար շատ լուրջ հիմքեր անհրաժեշտ կլինեն: Մասնագիտական տեսանկյունից գնահատական տրվեցին այդ գլխի՝ կյանքի, քաղաքական ապաստանի, բնակարանի անձեռնմխելիության, ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքների և այլ դրույթներին: Գ. Ղազինյանը դրական գնահատեց այն, որ նախագծում առկա են դատական իշխանության անկախությունը երաշխավորող լուրջ հիմքեր: Արդարադատության մարմինների ձևավորման ներկայիս կարգը և նրանց ներկայացվող պահանջները ներկայում լիարժեք չեն ապահովում այդ անկախությունը: Դատական իշխանության անկախության երաշխիքներից են դատավորներին առաջադրվող պահանջները, որոնք նախագծում հստակ են և անհրաժեշտ ծավալով ներկայացված: Բանախոսի կարծիքով, այդուհանդերձ, վերապահումով կարելի է մոտենալ վճռաբեկ դատարանի նախագահի ընտրության վերաբերյալ դրույթին. այն, որ վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների թեկնածուներին Բարձրագույն դատական խորհուրդը ներկայացնում է Ազգային Ժողովի հաստատմանը /որը քաղաքական մարմին է/, դրանով քաղաքականացվում է բարձրագույն ատյանի ընտրությունը: Դատական իշխանության անկախության մյուս երաշխիքների թվում Գ. Ղազինյանը կարևորեց բոլոր դատարանների նախագահների ընտրովիության հանգամանքը:

Իր ելույթում Գ. Դանիելյանը հիմնականում կանգ առավ կառավարման խորհրդարանական ձևի իրավական դիտանկյունների վրա: Ըստ բանախոսի՝ խորհրդարանական մեծամասնության անհրաժեշտությունը վիճահարույց չի համարվել, խնդիրը կայանում է միայն դրա ձևավորման ձևերի ու սկզբունքների մեջ: Այս տեսանկյունից առաջընթաց կարող է արձանագրվել այն առումով, որ կռալիցիաները կձևավորվեն ընտրական օրենսգրքի դրույթների համաձայն, ինչը նշանակում է, որ գործընթացին իրավական կարգավորում է տրվում, ուստի խիստ քչանում են հայեցողությունների և կամայականությունների հնարավորությունները: Բացի այդ, ըստ Գ. Դանիելյանի, այնքանով, որքանով նախատեսվում է, որ ընտրական օրենսգրքին ունենա սահմանադրական օրենքի կարգավիճակ, ինչը համեմատաբար մեծ քվե է պահանջում, քաղաքական փոքրամասնությունները ևս մեծացնում են գործընթացի վրա ազդեցության իրենց հնարավորությունները:

Ռեկտոր Ա. Սիմոնյանը շնորհակալություն հայտնեց բանախոսներին՝ նախագծի՝ առավել հնչեղ դրույթները ներկայացնելու և մեկնաբանելու համար:

Որոշեցին. – Գ. Ղազինյանի և Գ. Դանիելյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:

- 2. Լսեցին.** – Ֆակուլտետների կանոնադրությունների հաստատման մասին : Իրավաբանական բաժնի վարիչ Ա. Թադևոսյանը, մասնավորապես նշեց, որ գիտական խորհրդի սեպտեմբերի 24-ի նիստում հաստատվել էր ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը, որի հիման վրա համալսարանի 19 ֆակուլտետներից 17-ի պարագայում մշակվել են ֆակուլտետային կանոնադրությունները և համապատասխան գիտական խորհուրդների նիստերում

ընդունվել: Որոշ ֆակուլտետների կանոնադրություններում իրավահարաբերությունների կարգավորման առավել բացված դրույթներ են զետեղված, որոնք, սակայն չեն հակասում օրինակելի կանոնադրությանը: Ռեկտոր Ա. Սիմոնյանն առաջարկեց քվեարկությամբ հաստատել 17 ֆակուլտետների (բացառությամբ ռադիոֆիզիկայի և աստվածաբանության ֆակուլտետների) կանոնադրությունները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին. – հաստատել ԵՊՀ 17 ֆակուլտետների կանոնադրությունները:

3. **Լսեցին.** – Հաղորդում 2015-16 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին: Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը մասնավորապես նշեց, որ ընդունելության մակարդակը և բնագիտական և սոցիալ-տնտեսագիտական ու հումանիտար ֆակուլտետներում նախորդ ուստարվա համեմատ նվազել է: Բնագիտական ֆակուլտետներում սովորում է համալսարանի ուսանողական կազմի 30 տոկոսը, այն դեպքում, երբ դրանցից երկուսում՝ մաթեմատիկայի և մեխանիկայի ու աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետներում կան ոչ բնագիտական մասնագիտություններ: Առաջին կուրս ընդունված դիմորդների մեջ գործերը ետ վերցրած և բանակ գորակոչված ուսանողների թիվը կազմել է 215: Նվազել է հեռակա ուսուցման համակարգ դիմորդների և ընդունվածների թիվը, ինչը, մագիստրատուրայի պարագայում, ի թիվս այլ հանգամանքների, հիմնականում պայմանավորված է եղել 2014-15 ուստարվա բակալավրիատի ավարտական կուրսերի ուսանողների խիստ ցածր թվաքանակով: Այդ տեսանկյունից մագիստրատուրա ընդունված 655 ուսանողների թիվը կարելի է գոհացուցիչ համարել, քանզի ակնկալիքներն ավելի քիչ էին, ընդ որում, այդ 655 ուսանողներից 400-ը սովորում են պետական պատվերի շրջանակներում: Այսպիսով, 2015-16 ուստարում բակալավրիատ և մագիստրատուրա ընդունված ուսանողների թիվը կազմել է 4362, նախորդ ուստարվա 5381-ի դիմաց, տարբերությունը կազմում է 1000: Իսկ ԵՊՀ ուսանողական ողջ կազմի, ներառյալ Իջևանի մասնաճյուղի, թիվը կազմել է 19757 ուսանող: Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ այս ամենը թեև կանխատեսելի էր, սակայն փաստն այն է, որ հիմնականում ուսանողների վճարովի ծառայություններից ձևավորվող եկամուտների պարագայում նման նվազումը տազնապալի է, ուստի անհրաժեշտ է աշխատանքներ տանել համալսարանի այլ վճարովի ծառայությունների թիվն ու ծավալը մեծացնելու ուղղությամբ: Այս տեսանկյունից ռեկտորը կարևորեց հատկապես արտասահմանցի ուսանողների թվի աճը, ինչը, հանրակացարանի կառուցման պարագայում դրական արդյունքներ կտա:

Որոշեցին. – Ա. Գրիգորյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին.** – Տեղեկատվություն 2014-15 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանը ներկայացրեց փոխատեղումներն ըստ ֆակուլտետների՝ իր ելույթում նշելով մագիստրատուրայի ցածր ընդունելության պարագայում որոշ մասնագիտությունների գծով նույնիսկ մի քանի անվճար տեղերի թափուր մնալու մասին: Հ. Ժամհարյանը, մասնավորապես անդրադարձավ նաև մագիստրատուրայում ՄՈԳ-երի բարձր մակարդակի պահպանման խնդրին՝ շեշտելով դրա բացասական ազդեցությունը ռոտացիայի գործընթացի վրա: Նրա

խոսքով, ֆակուլտետներում հաճախ հետևություններ չեն անում՝ գնահատման կարգը ավելի պատշաճ կազմակերպելու հարցում:

Որոշեցին. – Շ. Ժամհարյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր

5.1 Լսեցին. – Գերմանացի հայագետ, Հայոց Յեղասպանության մասնագետ, Բեռլինի Ազատ համալսարանի նախկին գիտական աշխատող Տեսսա Հոֆմանին Երևանի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը մասնավորապես նշեց, որ Գերմանացի հայագետ, սոցիոլոգ, ցեղասպանագետ Տեսսա Հոֆմանը մեծ ներդրում ունի Հայոց Յեղասպանության ճանաչման գործում ինչպես գիտական հրապարակումների միջոցով խնդիրը միջազգային գիտական հանրությանը ներկայացնելու, այնպես էլ հասարակական շրջանակներում խնդրի առնչությամբ լուրջ քննարկումներ նախաձեռնելու տեսանկյունից: Նրա ողջ գիտակրթական կարիերան կապված է հայագիտության ու Հայոց Յեղասպանության ուսումնասիրությունների հետ: Հայոց Յեղասպանությանը նվիրված բազմաթիվ մենագրությունների, գիտական հոդվածների, գիտական զեկուցումների հեղինակ է: Լայն է նրա զեկուցումների աշխարհագրությունը՝ Տոկիո, Բյոուսեյ, Երևան, Փարիզ, Վիեննա և այլուր: Իր աշխատանքներում նա ոչ միայն փաստում է Հայոց Յեղասպանության եղելությունը, այլև գիտականորեն հիմնավորում այդ ողբերգության ճանաչումն ու դատապարտումը՝ նոր ցեղասպանությունները կանխելու տեսանկյունից: Հոֆմանն առանձնակի շեշտում է Հայոց Յեղասպանության իրականացման գործում կայսերական Գերմանիայի մեղսակցության հանգամանքը և իր բազմաթիվ ելույթներում շեշտում հենց Գերմանիայի պարտականության կարևորությունը՝ ճանաչելու, դատապարտելու Յեղասպանությունը և ջանքեր գործադրելու, որ մյուս պետությունները ևս դա անեն: Հոֆմանը մի քանի ուսումնասիրություններ նվիրել է նաև ներկայիս Թուրքիայում ապրող հայ ազգային փոքրամասնության խնդիրներին՝ հանդես գալով հայանպաստ գնահատականներով: 1979թ.-ից նա հանդիսանում է «Սպառնալիքի տակ գտնվող ժողովուրդների պաշտպանության ընկերություն» միջազգ. իրավապաշտպան կազմակերպության նախագահության անդամ և համակարգող խմբի ղեկավար, որի շրջանակներում էլ հանդես է գալիս Թուրքիայի և միջազգային հանրության կողմից Օսմանյան կայսրությունում 1915-ի Հայոց Յեղասպանության ճանաչման պահանջով: Տեսսա Հոֆմանին ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելը նախ կլինի ԵՊՀ-ի երախտագիտության արտահայտություն, երկրորդ, քանզի նա տարիքային պատճառով այլևս չի կարող դասավանդել Բեռլինի Ազատ Համալսարանում, ապա ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչումը նրան հնարավորություն կտա հանդես գալու հայանպաստ հրապարակումներով բուհական գիտական հանդեսներում:

Որոշեցին. – Գիտության և կրթության բնագավառում բացառիկ ձեռքբերումների, Հայոց Յեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում նշանակալի ավանդի և Երևանի պետական համալսարանի հետ բազմամյա բեղուն համագործակցության համար, հայագետ, Հայոց Յեղասպանության մասնագետ, Բեռլինի Ազատ համալսարանի նախկին գիտական աշխատող, դոկտոր Տեսսա Հոֆմանին շնորհել Երևանի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում:

5.2 Լսեցին. – ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Նորիկ Անուշավանի Այվազյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ Նորիկ Այվազյանը 1989թ.-ից գրեթե 25 տարի ղեկավարել է սահմանադրական իրավունքի ամբիոնը: Այդ տարիների ընթացքում ամբիոնը ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը զուգահեռ ակտիվորեն մասնակցել է հանրապետությունում իրականացվող սահմանադրաիրավական բարեփոխումներին: Ամբիոնի ղեկավարման տարիներին Ն. Այվազյանի կողմից պատրաստվել են մոտ երեք

տասնյակ գիտնականներ, ինչպես նաև հրատարակվել են բուհական դասագրքեր և արժեքավոր մենագրություններ: Ռեկտորը նշեց, որ ամբիոնի վարիչի լիազորությունները վայր դնելու կապակցությամբ իրավագիտության ֆակուլտետը միջնորդում է Ն. Այվազյանին շնորհել սահմանադրական իրավունքի ամբիոնի պատվավոր վարիչի կոչում, ինչը լիովին համապատասխանում է ԵՊՀ պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կանոնակարգի դրույթներին: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին. - Ամբիոնի վարիչի լիազորությունները վայր դնելու կապակցությամբ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավագիտության դոկտոր Նորիկ Անուշավանի Այվազյանին շնորհել նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում:

5.3 Լսեցին. - ԵՊՀ դասախոսների տարբերակված հավելավճարի նոր կարգի մշակման նպատակով գիտական խորհրդի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը նշեց, որ կապված ԵՊՀ 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նոր պահանջների կենսագործման հետ՝ անհրաժեշտություն կա հիմնովին վերանայել ԵՊՀ-ում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգը: Այն վերանայելու և նոր կարգ մշակելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել գիտական խորհրդի ժամանակավոր հանձնաժողով: Ռեկտոր Ա. Միմոնյանը գիտխորհրդին դիմեց ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու և դրա անդամների թեկնածուներ առաջադրելու առաջարկով: Առաջադրվեցին 9 թեկնածուներ: Քվեարկությամբ հաստատվեց հանձնաժողովի ձևավորումն ու նրա կազմը:

Որոշեցին. - Ստեղծել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ ԵՊՀ դասախոսների տարբերակված հավելավճարի նոր կարգի մշակման ժամանակավոր հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1. Գևորգյան Գեղամ Գրիգորի – գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր,
2. Գրիգորյան Ալեքսանդր Կոնստանտինի – ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր,
3. Մարկոսյան Ռուբեն Լևոնի – ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր,
4. Ավետիսյան Արմեն Ռուդոլֆի – արհեստակցական կազմակերպության նախագահ,
5. Ժամհարյան Հրանտ Գևորգի – ուսումնամեթոդական վարչության պետ,
6. Թադևոսյան Արմեն Ադամի – իրավաբանական բաժնի վարիչ,
7. Վարդանյան Իշխան Վլոդյայի – գիտակազմակերպչական բաժնի վարիչ,
8. Ավագյան Ռուանդ Մամիկոնի – ֆիզիկայի ֆակուլտետի դեկան,
9. Մնացականյան Հայկ Գերասիմի – ֆինանսահաշվալին ամբիոնի վարիչ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

27.10.2015թ.